Վսեմ. Տ. Պողոս փաշան, ինչպէս գրում է Վեհափառ Հայրապետին իւր 9 Յունիսի (Ն. տ.) նամակով՝ ճանապարհուել է Եգիպտոսից Եւրոպա՝ շարունակելու կատարել իւր առաքելութիւնը Հայկական հարցի առթիւ՝ աշխատելու բարենորոգումների իրականացման համար։ Ինչպէս գիտենք, Վեհափառ Հայրապետն ներկայ 1914 թ. 20 փետրուարի կոնդակով օրհնելով Տ. Պողոս Փաշային Հայկական հարցի առթիւ նորա կատարած յաջող գործունէութեան համար՝ ցանկութիւն է յայտնել՝ որ նա մնայ Իւր ներկայացուցիչը «գնոյն ազգօգուտ և զմարդասէր գործունէութիւն շարունակել վասն կատարեալ յաջողութեան և իրագործման բարենորոգութեանց հայաբնակ գաւառաց Տաճկաստանի»*. Վսեմափայլ Տէր Պողոս փաշան մեծ պատրաստակամութեամբ յանձն է առնում կատարել Նորին Վեհափառութեան կամքը՝ շարունակել լինել Նորա ներկայացուցիչը, որի առթիւ մի նոր կոնդակով ևս Վեհափառն նշանակելով Իւր ներկայացուցիչն՝ յանձնարարում է Վսեմ. Տ. Պողոս Փաշային Եւրոպայում աշխատել տեսնել կարևոր մարդկանց և ջանադիր լինել բարենորոգումների յաջող իրագործման համար։

Վսեմ. Տ. Պողոս Փաշան Յունիսի 14—15-ին եղել է Պետերբուրգում՝ տեսնուել է արտաքին գործոց Նախարար Սազանովի և արևելեան գործերի ղեկավար իշխան Տրուբեցկոյի հետ։ Պետերբուրգի հայ գաղութն իրենց երախտագիտական զգացմունքներն են արտայայտել Մեծ հիւրին մի ճաշկերոյթով։

---

*) Տես «Արարատ» Մարտի համարը։